ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 Հեռ. (374+1) 287401, (374+81) 2 25 22
„13„ „07„ 2016թ N 01/06.2/4634-16 Ֆաքս (374+1) 28 18 32

<< ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> Հ/Կ ՆԱԽԱԳԱՀ,
<< ՀԵՏՔ >> ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 2016թ. հուլիսի 7-ի 25D8-10D5-9AD4 գրության հայտնում եմ, որ 2005 -2015թթ ընթացքում մարզում հիմնվել են հետևյալ կաթի մթերման կետերը.

- Սալլի՝ <<Սելիմ>> ՍՊԸ կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության կետ: Հիմնվել է 2002թ, անձնական և <<USDE>> ամերիկյան կազմակերպության միջոցներով /40 հազար դոլար/ և համաֆինանսավորմամբ /60հազար դոլար/, ընդհանուր արժեքը՝ 100 հազ. դոլար: Տնօրեն՝ Լևոն Ղազարյան: Գործում է :
- Ելփին՝ <<Գերասիմ >> կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության կետ: Հիմնվել է 2010 թվին, անձնական միջոցներով /մոտ 40մլն. դրամ/ տնօրեն՝ Արթուր Նազարյան: Գործում է:
- ք. Եղեգնաձոր՝ <<Գոլդեն Գոուլթ>> ՍՊԸ, կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության կետ: Հիմնվել է 2009թ անձնական միջոցներով /120մլն դրամ/ Տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան: Գործում է :
- ք. Ջերմուկ՝ <<Ջերմուկ բյու>> ՍՊԸ, կառուցվել է 60-ական թվականներին, սեփականաշնորհվել է 1991թվականին: Տնօրեն՝ Սամվել Բաբայան: Գործում է :
- Աղնջաձոր համայնքում 2015թ <<Ֆուլլեր>> տնաշինական կենտրոնի միջոցներով ստեղծվել է <<Վարդենյաց կաթ արտադրողներ>> կոոպերատիվը /5.6 մլն. դրամ/:
Կոոպերատիվի նախագահ Ահարոն Գաբրիելյան: Գործում է :
- Գնդեվազ համայնքում 2015թ <<Հաբիթաթ ֆոր Յումենիթի Արմենիա>> հիմնադրամի միջոցներով ստեղծվել է <<Գնդեվազի կաթ արտադրողներ>>

կոոպերատիվը /12 մլն դրամ/ : Կոոպերատիվի նախագահ՝ Արամ Հարությունյան: Աշխատանքներն ավարտված են, սակայն դեռ չի շահագործվել:

- Զառիթափ համայնքում 2015 թվականից <<Ֆուլլեր>> տնաշինական կենտրոնի միջոցներով /4.7մլն. դրամ/կառուցվում է կաթի ընդունման կետ: Աշխատանքները ընթացքի մեջ են:

Մարզի տարածքում գործում են 6 հակակարկտային կայաններ, որոնք տեղակայված են հետևյալ համայնքներում՝

1. Գետափ՝ <<Գետափի գինու գործարան>> ՍՊԸ
2. Գնիշիկ՝ <<Գետափի գինու գործարան>> ՍՊԸ
3. Աղավնաձոր՝ <<Գետափի գինու գործարան>> ՍՊԸ
4. Աղավնաձոր՝ սեփականատեր՝ Շաբո Եսայան
5. Ռինդ՝ համայնքային /ՓՄՁ/
6. Արենի՝ համայնքային / ՓՄՁ/

Կայանների միջին արժեքը կազմում է 4.5 - 5.0 մլն.դրամ:

Հարգանքով՝ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ Գ.Խաչատրյան
Հեռ. /060712095/